



PARADIGMA
Educational Foundation

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ



**FRIEDRICH NAUMANN
FOUNDATION** For Freedom
South Caucasus



ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է
«Պարադիգա» կրթական
հիմնադրամի կողմից
2020 | ՀՈՒՆԻՍ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 27-ին՝ [«Պարադիգմա» կրթական հիմնադրամի](#) նախաձեռնած Edcamp Հայաստան 2020 կրթական-ուսուցչական համաժողովի շրջանակում իրականացվել է նախադարձական կրթության ոլորտային քննարկում: Քննարկմանը զուգահեռ հարթակում մասնակցել է **373** մասնակից, ՖԲ հարթակում ուղիղ հեռարձակումն արձանագրել է **19.600** դիտում: Քննարկումը կազմակերպվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանյան գրասենյակի և Ֆրիդրիխ Նաումանի՝ «Հանուն Ազատության» հիմնադրամի Հարավային Կովկասի գրասենյակի հետ համագործակցությամբ:

233 հարցերն ու դիտարկումներն ամփոփվել են սույց զեկույցում: Զեկույցը ներկայացնում է հարցերը և առաջարկները՝ ըստ հետևյալ բաժինների.

- Տնօրեններ և կառավարում,
- Դաստիարակներ, աշխատանքի իրավունք և պայմաններ,
- Ուսուցման գործընթաց,
- Այլ



ՏՆՕՐԵՆՆԵՐ ԵՒ Կ ԱՌԱՎԱՐՈՒՄ

Հարցեր

- Ինչպե՞ս է անցկացվելու մանկապարտեզի տնօրենի վերապատրաստումները:
- Ովքե՞ր, ե՞րբ և ինչպե՞ս կարող են դիմել մանկապարտեզի տնօրենի հավաստագրի:
- Ո՞ւմ և ինչպե՞ս դիմել ուսումնական հաստատության ղեկավարի իրավունքի հավաստագիր ստանալու համար: Ինչպե՞ս է այդ ամենն իրականացվում:
- Եթե մանկապարտեզի տնօրենը մեկ տարվա աշխատող է, արդյո՞ք հիմա պարտադիր պետք է հավաստագիր հանել, թե՞ կարելի է դա անել 5 տարին լրանալուց հետո:
- Մանկապարտեզների տնօրենների ժամանակավոր պաշտոնակատարների նշանակման կարգը և ընտրության չափանիշներն ինչպե՞ս են կարգավորվում:
- Արդյո՞ք սխալ չէ մանկավարժական փորձ չունեցող անձի նշանակումը տնօրենի պաշտոնում:
- Մանկապարտեզի տնօրենի կողմից զարգացման ծրագիր ներկայացնելը դեռևս «փրկություն» չէ ստեղծված լճացած վիճակից դուրս գալու, որովհետև ինչպես և դպրոցներում տնօրենները ներկայացնում են զարգացման ծրագիր, բայց ընտրվելուց հետո ոչ ոք, անգամ դպրոցի անձնակազմը տեղյակ չի ինչ ծրագիր է ներկայացրել տնօրենը, իսկ ղեկավար անձնակազմը թերևս հետամուտ չի լինում, արդյո՞ք 10 տոկոսն անգամ իրականացրել է տվյալ տնօրենը: Խնդրում եմ հնարավոր է արդյոք այնպիսի կետ ներառել, որ այդ զարգացման ծրագիր կոչվածը չմնա թղթի վրա, տնօրենը գիտակցի, որ եթե իր զարգացման ծրագրում գրած քայլերը չիրագործի, խզվելու է իր հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հարցեր

- Սոց. փաթեթի հնարավորություն կտրվի՞ դաստիարակներին նոր օրենքի շրջանակներում:
- Եթե անձն ունի դաստիարակի՝ 3 և ավել տարվա աշխատանքային փորձ, գերազանց ավարտած միջին մասնագիտական կրթություն և դասվարի բարձրագույն կրթություն, կարո՞ղ է աշխատել նախադպրոցական հիմնարկում, քանի որ նշվում է, որ անհրաժեշտ է նախադպրոցականի բարձրագույն կրթություն: Եթե ոչ, ինչպե՞ս պետք է վերապատրաստվել:
- Ինչո՞ւ է համալսարաններում գործում նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բաժինը, եթե համայնքներում աշխատանքի ընդունելիս հաշվի են առնում մի քանի տարվա փորձը և ոչ կրթությունը:
- Արդյո՞ք ճիշտ է որ միջին մասնագիտական կրթությամբ կարելի է աշխատել որպես դասվար:
- Արդյո՞ք նախատեսվում է նախակրթարանի դաստիարակների մեթոդական վերապատրաստում: Եթե այո, ե՞րբ և ինչպե՞ս:
- Չե՞ք կարծում որ աշխատակցի կրթության մոտեցումը փոխել է պետք՝ ներառելով նաև հարակից մասնագիտություններ՝ հոգեբան, լոգոպեդ, ովքեր նույնպես տիրապետում են նախադպրոցական մանկավարժության գործիքակազմին:
- Արդյո՞ք ճիշտ է դաստիարակին ավելորդ գրագրությամբ ծանրաբեռնելը:
- Քաղաքային մանկապարտեզներում նույնպես կազմվում են աշխատանքային պայմանագրեր և եթե այո ինչ ժամանակով:
- Ինչո՞ւ են Հայաստանի տարբեր մարզերի և Երևան քաղաքի նախադպրոցական հաստատությունների հաստիքացուցակը և դրույքաչափերը տարբեր:
- Դասվարը ինչպե՞ս պետք է մեկ դրույք ունենա:
- Արդյո՞ք ճիշտ է, որ ԿԳՄՍ-ն ուզում է դաստիարակի օգնականին տալ մանկավարժի որակավորում:
- Ես դաստիարակ եմ և աշխատում եմ 8:30-17:30, բայց վճարվում եմ մեկ դրույքի չափով: Ինչո՞ւ մեզ չի հասնում դրույքուկես աշխատավարձ, մեզ հաճախ ասում են, որ չի թույլատվում վճարենք այդքան:
- Միջնակարգ մասնագիտական կրթությամբ մասնագետներն արդյո՞ք կարող են շարունակել աշխատել:

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Առաջարկներ

- Ուշադրություն դարձնել սեզոնային պարտեզներին և աշխատանքային պայմանագրերը կնքել մեկ տարուց ոչ պակաս ժամկետով:
- Վերանայել միայն մեկ ֆակուլտետի դիպլոմի պահանջը և հնարավորություն տալ հարակից մասնագիտություններին:
- Կատարել մանկավարժների ճիշտ ընտրություն համապատասխան որակավորմամբ:
- Բարձրացնել աշխատավարձերը գոնե 20-30%-ով, դրա՝ երեխաների թվից կախվածությունը վերացնել և տրամադրել սոց. փաթեթ:
- 4 տարի կրթություն ստացած անձիք և 2 տարվա աշխատանքային ստաժ ունեցող սակայն կրթություն չունեցող «մասնագետներին» տրվում է առաջնահերթություն, իսկ կրթությանը՝ ոչ:
- Կազմակերպել որակավորման կուրսեր (թեկուզ վճարովի), որտեղ ցանկացողները կկարողանան կես տարվա ընթացքում ստանալ բոլոր հմտությունները և գիտելիքները, որոնք անհրաժեշտ են: Արդյունքում ունենալ հավաստագիր այս ոլորտում աշխատելու համար:
- Շատ կուզեի՝ նախադպրոցական ոլորտի աշխատակիցները լինեին իրականում մանկավարժներ. լինում են դեպքեր, երբ երեխան դժկամությամբ է հաճախում նախակրթարան (երբեմն նույնիսկ ծնողի պարտադրանքով), ինչն էլ իր հերթին առաջ է բերում շատ խնդիրներ ապագայում:
- Դաստիարակները պետք է մասնագիտական կոմպետենտության ստուգում անցնեն: Պետք է հասկանալ՝ կարող է արդյոք տվյալ անձը աշխատել երեխաների հետ (թե՛ հոգեբանական, թե՛ մասնագիտական առումով): Երեխային նվաստացնող, վիրավորող դաստիարակը մանկապարտեզում անելիք չունի, ինչքան էլ որ հմուտ լինի իր գործում:
- Ես դպրոցում գործող նախակրթարանի մանկավարժ դաստիարակ եմ արդեն 6 տարի աշխատում եմ, սակայն ոչ մի անգամ չի եղել վերապատրաստումներ, նոր ուսուցման մեթոդներ:
- Մեկ դրույքը համարվի 18 ժամ:
- Պարտադիր դարձնել հատուկ մանկավարժների հաստիքը՝ հոգեբան, լոգոպեդ:
- Տեսչական մարմնի ստուգման ժամանակ նրանց օգնությունն ու աջակցությունը դաստիարակներին, տեսչական մարմինը սխալը նկատելու և ուղղորդելու համար պետք է լինի և ոչ թե սխալ գտնելու և նկատողություններ անելու համար:
- Մանկավարժին արգելել երեխաների հետ կոպիտ հաղորդակցվել, ստեղծել հարգանքի մթնոլորտ, ոչ թե վախի:

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Սկսնակ դաստիարակները մեծ աջակցության կարիք ունեն և ցանկալի է, որ այդ դաստիարակները գոնե սկզբնական շրջանում անվճար վերապատրաստվեն:
- Նախադպրոցական հաստատությունում, ինչպես դաստիարակները, այնպես էլ դաստիարակի օգնականները (որովհետև նրանք ոչ պակաս շփում են ունենում երեխաների հետ, քան դաստիարակները) պետք է առաջինն օժտված լինեն հոգեբանի հմտություններով, շատ բարձր մակարդակով նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանությանը ծանոթ լինեն, այլապես երեխաների ճիշտ նախապատրաստմը դպրոցին, ինչպես նաև ինտեգրումը հասարակություն չի ստացվի:
- Հստակեցնել նախադպրոցական հաստատություններում դաստիարակների ընդմիջումների հարցը, ի վերջո, եթե ընդմիջման ընթացքում որևէ դեպք պատահի, պատասխան է տալու դաստիարակը:
- Հաստիքացուցակի շուրջ - Շուրջ 12 տարի «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի (մեր մանկապարտեզը հիմնադրամի վերապատրաստման կենտրոն է) և Եղեգնաձոր քաղաքի համայնքի ղեկավարի հետ կնքած պայմանագրի հիման վրա մեր մանկապարտեզում խմբերում աշխատում էին 2 դաստիարակ (1դ. և 0.5 դ.): Նրանք աշխատում էին համատեղ՝ հիմնականում առավոտից մինչև կեսօր: Համատեղ աշխատանքը շատ արդյունավետ էր, միասին պլանավորում էին աշխատանքները, քննարկում, վերլուծում, կազմակերպում երեխաների դիտարկումները, աշխատանքները ծնողների հետ: Այդ ժամանակ լուծվում էր նաև նրանց ընդմիջման հարցը:



ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

Հարցեր

- Փաթեթով պլանավորումը պարտադիր է:
- Ուսումնամեթոդական փաթեթն ըստ ձեզ արդյունավետ է:
- Արդյո՞ք փոխվելու են կրթական համալիր ծրագրերը:
- Ինչպե՞ս եք պատկերացնում մանկապարտեզից դպրոց սահուն անցում, եթե մինչ այժմ չունենք չափորոշիչներով կազմված ավագ խմբի ուսումնական ծրագիր, իսկ հինը վերանայման, բեռնաթափման կարիք ունի:
- Ե՞րբ կստանան մանկապարտեզները Նոր ուսումնական ձեռնարկները, և կունենա՞նք արդյոք բոլոր առարկաների ծրագրերը:



ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

Առաջարկներ

- Ֆիզկուլտուրան պարապի համապատասխան մասնագետ համապատասխան գույքի առկայությամբ, լինի պարուսույցի հաստիք:
- Մանկապարտեզում ավելացնել երեխաների խաղի ժամանակը, այնպես անել, որ լինեն կուշտ ու ապահով, քնեն, ոչ թե դպրոցի գործերն անեն:
- Վերանայել նախադպրոցական կրթության ծրագրերը և չափորոշիչները, հնարավորին չափով թեթևացնել՝ կարևորելով խաղային գործունեության դերը:
- Յուրաքանչյուր մանկավարժի ազատ ստեղծագործելու և ծրագրից դուրս աշխատելու հնարավորություններ տալ:
- Տարվա ընթացքում, մանկավարժների կողմից, խմբերում կազմակերպվող հանդեսների թվի կրճատում: Դրանց փոխարեն կազմակերպել պարապմունք-միջոցառումներ:
- Չափազանց կարևոր է նախադպրոցական կրթության բովանդակության, կրթական ծրագրերի և պետական չափորոշիչների փոխկապակցվածությունը, միմյանց նկատմամբ ներկայացվող պահանջների համաձայնեցումը. մյուս կողմից, նշված այդ կողմերի՝ տարրական դպրոցի հետ շարունակական ապահովումը:
- Մանկապարտեզները հագեցնել մանկական երաժշտական գործիքներով, խաղալիքներով և դիդակտիկ նյութերով:
- Օտար լեզուները, օրվա 2 կեսի պարապմունքները հանել, քանի որ դրանք ավելի շատ դրանք հոգնեցնում են:
- Վերանայել օրվա ռեժիմը: Օրինակ՝ ճաշ, զբոսանք, քուն: Պարապմունքների միջև ընկած ընդմիջումը ավելի երկար լինի և այլն:
- Վերացնել բոլոր միջոցառումները:
- Հստակ չափորոշիչներ սահմանել, վերանայել համալիր ծրագրերը, ուսումնամեթոդական ձեռնարկները:
- Վերանայել «պարապմունքների գրաֆիկը»՝ վերջինիս ծանրաբեռնվածությունը (դա թողնել միայն ավագ խմբերի համար), դրա փոխարեն սահմանել մեկամսյա, եռամսյա և տարեվերջյան չափորոշիչ, որը, ներկայիս «դասացուցակային» և դաստիարակին կադապարող պարապմունքների գրաֆիկի փոխարեն, կենթադրի դաստիարակի ազատ գրաֆիկով և ստեղծագործաբար կազմակերպվող պարապմունքներ, երեխաներին էլ ավելի հնարավորություն կտա՝ իրենց նախընտրած գործունեությամբ զբաղվելու:
- Պարապմունքները բացառապես խաղային դարձնել:
- Ուսուցման և դաստիարակության միջոցների մեջ շատ կարևոր է ներառել «դիդակտիկ ուսումնական նյութեր» հասկացությունը, քանի որ երեխան լավ է սովորում, երբ լսում, տեսնում և կատարում է գործողություն:
- Նախադպրոցական կրթության խնդիրներում իմ կարծիքով կարևոր է ներառել «Ձևավորել երեխաների մոտ ուսման նկատմամբ դրական վերաբերմունք»:

Հարցեր

Ինչպե՞ս կարելի է միանալ մենթորների վերապատրաստումներին:

Որո՞նք են մանկապարտեզների բովանդակային աշխատանքների ստուգման գործընթացների կազմակերպման մեխանիզմները:

Հնարավո՞ր է ստեղծել սննդի բաշխման այսպես ասած պահեստներ, որոնք կգբաղվեն թույլատրելի սննդի բաշխմամբ: Բոլորը երեխաները կօգտվեն նույն տեսականուց:

Ե՞րբ է մարզերում նախադպրոցական կրթությունը դառնալու անվճար:

Միջին մասնագիտական կրթության մասնագետների նկատմամբ այժմ ի՞նչ օրենք է կիրառվում:

Ի՞նչ փոփոխություններ կլինեն մանկավարժական թոշակների հետ կապված:

Երևանում ներառական կրթություն իրականացնող (կարծեմ թվով 8) մանկապարտեզների շենքային պայմաններից մինչև աջակցող մասնագետների «քչությունն» ունենք մեծ բաց: Ինչո՞ւ այս մանկապարտեզները չունեն որևէ առավելություն:

Ինչո՞ւ համայնքներից պետությունը հետ չի վերցնում մանկապարտեզները: Կրթության և գիտության նախարարության հովանու ներքո գտվող և/դ հաստատությունները շատ ավելի լավ վիճակում են գտնվում (ուսումնական առումով), քան մանկապարտեզները:

Առաջարկներ

- Կարծում եմ, որ նախադպրոցական տարիքի կրթության ամենամեծ խախտումն այն է, որ 6 տարեկաններին (որոշ դեպքերում նաև 5 տարեկաններին) տարան դպրոց, հաջորդը, որ դեռ նկարել ու խոսել չսովորած 5 տարեկաններին սկսեցին պատրաստել դպրոցին ու սովորեցնել տառեր ու թվեր գրել: Այժմ համատարած խախտված է երեխաների կեցվածքը, գրիչ բռնելու, նստելու ու գրելու ձևը: Երեխաներից շատերն ունեն ողնաշարի ու տեսողության խնդիրներ, որոնք գնալով ավելի են բարդանում ու դեռահասության ու հասուն տարիքում լուրջ հիվանդություններ դառնում: Հանուն մեր առողջ սերնդի՝ խնդրում եմ դպրոցը դարձրեք 7 տարեկանից, իսկ նախադպրոցական տարիքում թույլատրեք միայն նկարել ու կտրել, սոսնձել, կապակցված խոսել ու պատմել, խաղալ ու բացահայտել: Տառերը ճանաչել, բայց չգրել:
- Բացվեն ներառական մանկապարտեզներ հարմարեցված պայմաններով, ոչ թե եղածից ստեղծեն, որտեղ կաշխատեն ոլորտի մասնագետներ:
- Բոլոր դպրոցներում պետք է բացվեն նախակրթարաններ 5-6տ. համար մանկապարտեզների բեռը թեթևացնելու համար:
- Նախադպրոցական ոլորտի մասնագետները նույնպես ատեստավորվեն՝ սկսած տնօրենից վերջացրած դաստիարակով, որովհետև հենց նախադպրոցական շրջանից է կախված, թե երեխան ինչ գիտելիքով է մուտք գործում դպրոց:

- Շատ կարևոր է, որ նախադպրոցական հաստատություն մուտք գործող յուրաքանչյուր Կապկու երեխա ունենա համապատասխան բժշկամանկավարժական մասնագիտական թիմի կողմից տրված ախտորոշում և եզրակացություն, որը հիմք կհանդիսանա կապկու երեխայի հետ ճիշտ գործընթացի կազմակերպման, մեթոդական մոտեցման և հետագա ուսուցման գործառնությունների իրականացման հարցերում: 0-3 տարեկան երեխաների խնդրով զբաղվում է առողջապահության համակարգը, 3-6 տարեկանը՝ կրթության համակարգը, երկուստեք համագործակցություն մասնագիտական թիմերի միջև: Դրա համար անհրաժեշտ է որ մասնագիտական թիմում ընգրկված լինեն բոլոր նեղ մասնագետները, ովքեր կգնահատեն յուրաքանչյուր երեխայի կարիքը, թե՛ առողջության պահպանման, և թե՛ կրթության կազմակերպման հարցերում:
- Խմբերում 28-ից 35 աշակերտի թիվը կրճատել՝ մինչև 15-20 երեխա:
- Թող յուրաքանչյուր տարիքային խումբ բաղկացած լինի 2 խմբից որ և երեխաների ուսումը հեշտ լինի և դաստիարակները կարողանան մաքսիմում ձևով հեշտ աշխատեն:
- Ներառական կրթությունը պարտադիր լինի ԲՈԼՈՐ պարտեզներում: Երեխան պետք է իր առաջնային գնահատումը անցնի պարտեզում, երկրորդայինը՝ դպրոցում:
- Մանկապարտեզներում շենքային և բակային պայմանների բարելավում:
- Մենք ստանում ենք 25 աշխատանքային օր արձակուրդ, իսկ դպրոցները, բուհերը և քոլեջները 45 աշխ. օր, բայց չէ՞ որ նրանք ունեն նաև աշնանային և գարնանային արձակուրդային օրեր, իսկ մենք՝ ոչ:
- Նվազագույնի հասցնել թղթաբանությունը և գրագրությունը:
- Արգելել երեխաներին նկարահանել՝ ֆոտո, վիդեո:
- Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2020թ-ի տարեկան ծրագրի և միջոցառումների հաստատված ցանկին, որտեղ «ՀՀ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածի բ կետի հավելված 2-ի 3 կետի 3.1 ենթակետում շարադրված է. Երևան քաղաքի յուրաքանչյուր վարչական շրջանում ներառական կրթություն իրականացնող մանկապարտեզներով ապահովում, գործող մանկապարտեզների հնարավորությունների ընդլայնում՝ երեխաների կարիքներն համապատասխան (տարվա ընթացքում): Մեր մանկապարտեզը գործող, ներառական կրթություն իրականացնող մանկապարտեզ է (վարչական շրջանում միակն է և այս պահին մանկապարտեզ են հաճախում 18 ԿԱՊԿՈՒ երեխաներ), որը հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող երեխաներին՝ տարրական թեքահարթակից սկսած մինչև հարմարեցված զուգարանակոնքերն ու մարզագույքը: Արդյոք մինչև 2020թ-ի ավարտը կիրականացվի՞ այս վերոնշյալ ծրագիրը:
- Կարելի է անցկացնել ինտերակտիվ միջոցառումներ, որին երեխաներն առանձնապես չեն պատրաստվում և դա նրանց համար անակնկալ է:

- Պետությունը համագործակցի նաև մասնավոր ոլորտի մանկապարտեզների հետ և հնարավորինս աջակցի, քանի որ վերջինս ունի կարևոր դեր ՀՀ տնտեսական զարգացման, պետական մանկապարտեզների բեռի թեթևացման, կրթության ոլորտում առողջ մրցակցություն և որակի նշաճողի բարձրացման հարցում:
- Ցանկալի է աշխատանքներ տանել ծնողների հետ, կարևոր ուղերձները սոցիալական հոլովակների և հետաքրքիր վիզուալ միջոցների տեսքով տարբեր խողովակներով ներկայացնել, քանի որ այս ոլորտում շատ անհամաձայնություններ և խնդիրներ ծագում են հենց ծնողավարության ոչ բավարար գիտելիքների պատճառով:
- Խնդիր է լվացարարի հաստիքը, մինչև 12 խմբանոց մանկապարտեզներում 0.25 միավոր է, որը աշխատանքի ծավալի համեմատ շատ քիչ է:
- Լավ է, որ այժմ մեծ ուշադրություն է դարձվում մանկապարտեզների վերանորոգումներին, բայց այստեղ մի լուրջ խնդիր կա: Հանրապետությունում շատ մանկապարտեզներ նախագծվել և կառուցվել են վաղուց և այսօր այդ շենքերը չեն համապատասխանում ժամանակակից չափանիշներին: Ուստի կարծում եմ, որ ավելի ճիշտ կլինի կառուցել ժամանակակից պահանջներին համապատասխան նոր մանկապարտեզներ:
- Ես կարծում եմ, որ եթե մենք որակ ենք ուզում, ուրեմն պետք են նաև լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներդնել արդյունք ստանալու համար:
- Ուսումնասիրել, թե հեռավոր մարզեր վերջին անգամ երբ է իրականացվել հանդիպում մանկապարտեզի աշխատակիցների և անձնակազմի հետ:



Սույն զեկույցում տեղ է գտել 33 հարց և 54 առաջարկ, որոնք ներկայացնում են ստացված հարյուրավոր հարցերի և առաջարկների ամփոփումները:

Զեկույցում ներկայացված հարցերն ու առաջարկները կարող են չհամընկնել «Պարադիգմա» կրթական հիմնադրամի դիրքորոշումների և մոտեցումների հետ:

